ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ուսուցման մեթոդներ և հնարներ

Կազմեց՝ Սաթինե Ղազարյան

<<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

<< Կապանի թիվ 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն …… 3
2. ԽԻԿ համակարգ, կիրառման առանձնահատկությունները ……. 4- 9
3. Ավանդական և ինտերակտիվ ուսուցում…… 9-10
4. Ուսուցման մեթոդներ և հնարներ…….. 10-13
5. Ավանդական և ժամանակակից մեթոդներով դասի համեմատություն…… ……. 14
6. Հետազոտական աշխատանք……. 14-16
7. Եզրակացություն……17
8. Հավելված 1……18
9. Հավելված 2……. 19
10. Գրավոր աշխատանքի ինքնաստուգում……20
11. Հավելված 4……21-22
12. Հավելված 5……23-24
13. Գրականություն……25

Ներածություն

<<Երեխաներին որևէ գործունեության մեջ ընդգրկելուց առաջ հետաքրքիր նրան>>
Լ.Ս. Վիգոդսկի

Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի և հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա դառնա դասապրոցեսի մասնակից: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է:Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը՝ ելնելով սովորողների կարողությունների և հմտությունների մակարդակից, դասարանի առաջադիմությունից և որակից:Ուսումնական գործընթացի ընթացքում ուսուցիչը օգտագործում է դասավանդման տարբեր մեթոդներ, որոնց միջոցով ուսուցման պրոցեսը կարելի է դարձնել ավելի արդյունավետ:

Նախագծված աշխատանքում իմ նպատակն է հետազոտությամբ պարզել.

1. Ժամանակակից մեթոդների արդյունավետությունը դասապրոցեսի ընթացքում
2. Որքանո՞վ են աշակերտները ներգրավվում ժամանակակից մեթոդով կառուցված ինտերակտիվ դասապրոցեսին:
2. Ակտիվացնել դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը դասապրոցեսում:

ԽԻԿ համակարգ, կիրառման առանձնահատկությունները

Քննադատական մտածողության զարգացման երեք տեխնոլոգիան ճանաչողական գործընթացի մի մոդել է, որի մեջ սովորողները ներգրավվում են՝ նախքան նոր նյութի մատուցումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստավորվում) և նյութը մատուցելուց հետո (կշռադատում):

ԽԻԿ-ն ունի մի շարք ընդհանրություններ մեզ քաջ ծանոթ ավանդական դասի կառուցվածքի հետ՝ նախապատրաստական (խթանում), նոր դասի հաղորդման (իմաստավորում) և ամփոփման (կշռադատում) փուլեր:

Խթանման կամ նախապատրաստական փուլ: Այս փուլում սովորողներն առաջադրանքն ստանում են ուղեղային գրոհի (մտագրոհ) եղանակով.

- Գրի է առնվում այն ամենի ցուցակը, ինչը նրանք գիտեն կամ էլ կարծում են, որ գիտեն.
- Ընդունվում են բոլոր մտքերը՝ անկախ այն բանից, թե դրանք ճիշտ են կամ սխալ:

Դրանից հետո դասավանդողը կարող է սովորողներին առաջարկել հարցեր, այն մասին, որոնք չեն քննարկվել, բայց ուղղակի կապ ունեն ուսումնասիրվող նյութի հետ:

Այս փուլում կարևոր է, որ ուսուցիչը հնարավորինս քիչ խոսի և սովորողները խոսքը խթանելու հնարավորություններ ընձեռի: Ուսուցիչն այս փուլում հանդես է գալիս ուղղորդողի և սովորողների մտածողությունը խթանողի դերում: Նա ուշադիր լսում է բոլոր կարծիքներն ու տեսակետները:Արդյունքում իրականացվում է ճանաչողական կարևոր գործունեություն:

1.Խթանվում են սովորողների արդեն առկա գիտելիքները (իմացածը) տրված թեմայի շուրջ: Դա սովորողին պարտադրվում է վերլուծել սեփական գիտելիքները և մտածել այն մասին, թե ինչ են այնուհետև մանրամասնորեն ուսումնասիրելու: Այս սկզբնական գործունեության կարևորությունն ավելի պարզ կդառնա, երբ ներկայացվեն մյուս երկու փուլերը:

Այս փուլում սովորողները լրացնում են իրենց իմացածը մյուսներին գիտելիքներով:Այսինքն՝ նա ստանում է նոր գիտելիքներ և ընդլայնում իրենց ունեցածը: Դա շատ կարևոր է, քանի որ գիտելիքները դառնում են հաստատուն, երբ դրանք ձեռք են բերվում արդեն իմացածի և հասկացածի ենթատեքստով: Սովորողները կառուցում են նոր պատկերացումներ՝ կարելի է ամրակայել այնպիսի հիմքեր, որոնցով նրանք կհասնեն նոր տեղեկատվության արագ ընկալմանն ու ճշգրտմանն:Սխալ հասկացվածը չի պարզվի, եթե տեղի չունենա

արդեն գոյություն ունեցող գիտելիքների ու պատկերացումների աշխույժ և բուռն քննարկում:

2.Խթանման փուլի երկրորդ նպատակը սովորողներին ակտիվացնելն է: Շատ հաճախ սովորողները պասիվորեն նստում են դասարանում, լսում ուսուցչին կամ դասախոսին:Որպեսզի սովորողները գիտակցված, հիմնավորված կերպով ու քնաղատաբար վերաբերվեն նոր տեղեկության ընյալմանն ու յուրացմանը, պետք է ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին:Մասնակցությունն ուսումնական գործընթացին ակտիվ է դառնում այն դեպքում, երբ սովորողը նպատակաուղղված մտածում և իր մտքերն արտահայտում է սեփական բառերով, երբ նա հնարավորություն է ունենում ցուցադրել, ներկայացնել իր գետիլիքները: Այս դեպքում տեղի է ունենում գործուն մտածողական-ճանաչողական գործունեյությունն: Արդյունքում, նախապես ստացված գիտելիքներն ավելի են ճշգրտվում և դառնում առավել խորությամբ իմաստավորված:Այժմ դրանք կարող են դառնալ կայուն հենք նոր գիտելիքների յուրացման համար: Դա հնարավորություն է տալիս նոր գիտելիքը արդյունավետորեն առնչել հնի հետ: Այդպիսով կարևորվում է խթանման փուլի երրորդ նպատակը, քանի որ յուրացումը նոր տեղեկատվությունն նախկին պատկերացումների հետ զուգորդելու և համակցելու գործընթաց է: Այս փուկում առաջարկվող թեմայի նկատմամբ ձևավորվում է հետաքրքրություն և որոշվում ուսումնասիրության նպատակը: Նպատակաուղղվածությունն ուսումնական գործընթացի արդյունավետության նախապայմանն է: Ուսումնական գործընթացում դիտարկվում են երկու տիպի նպատակներ՝ դասավանդողի առաջ քաշած կամ ուսումնասիրվող թեմայում ձևակերպված և սովորողի կողմից ընտրված:Ուսումնական գործունեյության արդյունավետությունն պայմանավորված է նաև սովորողի նպատակներով: Խթանման փուլի արդյունավետությունը ցածր է, երբ դրանում չի ձևավորվում կայուն հետաքրքրություն:

Դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով,տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել խթանման փուլում

- Մտագրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- Մտածի՛ր - զու՛յգ կազմի՛ր - քննարկի՛ր
- Հինգրոպեանոց շարադրություն
- ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակ
- Ուղղորդցած ընթերցանության առաջին քայլը

Իմաստի ընկալման փուլ: Այս փուլում սովորողը շփման մեջ է մտնում նոր տեղեկատվության, նոր մտքերի հետ: Այդ շփումը կազմակերպում է տեքստի ընթերցման, ֆիլմի դիտման, ելույթը լսելու կամ փորձի ձևով:

Այս փուկում սովորեցնողի ազդեցությունը նվազագույնն է սովորողի վրա:Սովորողներն առավել ինքնուրույն են և գործուն: Այս փուլում խիստ կարևոր է մանկավարժական գործընթացի իրականացման առումով: Դրա գլխավոր խնդիրն այն է, որ պահպանվեն սովորողների ակտիվությունը, հետաքրքրությունը և խթանման փուլում ձևավորված շարժման իներցիան: Լավ (սահուն, առոգանությամբ) կարդացողները տեքստի հատվածը նորից են կարդում:Լավ ունկնդիրները տեխեկությունն ընկալելիս՝ հաճախ հարցեր են տալիս կամ գրանցում այն,ինչ չեն հասկացել, որպեսզի հետագայում բացահայտեն դրանք: Բացի դրանից՝ երբ սովորողները վերահսկում են սեփական իմաստավորումը, ապա համեմատում են նոր տեղեկատվությունն իրենց արդեն ունեցած կայուն մտապատկերների հետ: Նրանք գիտակցված կերպով կապում են նորը հնի հետ և այդ կերպ կամուրջներ գծում հին և նոր գիտելիքների միջև, որպեսզի ստեղծեն նոր իմաստավորում:

Մեթոդներ, մեթոդական հնարներ, որոնք հարմար են կիրառել իմաստի ընկալման փուլում

- Տ աձև աղյուսակ
- Գաղափարների քարտեզագրում
- Վենի դիագրամ
- Փոխգործուն նշանների համակարգ
- Բանավեճ
- Զրույց
- Համառոտ դասախոսություն
- Կարուսել
- Ապագայի անիվ
- Խորանարդում
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում և այլն

Կշռադատում փուլը ուսուցման գործընթացում հաճախ անտեսվում է, չնայած՝ պակաս կարևոր չէ, քան մյուսները: Հենց այս փուլում են սովորողներն ամրապնդում նոր գիտելիքները և ակտիվորեն վերակառուցում սեփական պատկերացումները, որպեսզի դրանց մեջ ընդգրկեն նոր հասկացություններ: Սովորողները իսկապես նոր գիտելիքները դարձնում են իրենց սեփականը: Տեղի է ունենում յուրացում, որն ունի երկարատև բնույթ: Յուրացումը՝ բնութագրվում է իրական ու երկարատև փոփոխություններով:Դրանք տեղի են ունենում միայն այն դեպքում, երբ սովորողներն աշխատում են սեփական պատկերացումների վերակառուցման վրա և առկա

պաշարի մեջ ընդգրկվում է նորը: Այս փուլում իրականացվում են մի քանի կարևոր ուսումնական նպատակներ:

- Սովորողները փորձում են նոր մտքերն ու տեղեկատվությունը արտահայտել սեփական բառերով: Դա անհրաժեշտ է, որպեսզի կազմավորվեն նոր պատկերացումներ:
- Կատարվում է ուսումնական նյութի երկարատև յուրացում:Դրա աստիճանը տարբեր մարդկանց մոտ տարբեր է լինում: Սովորողներն ամենից լավ յուրացնում են այն, ինչը հասկացել են սեփական մտավոր գործընթացում և արտահայտում են սեփական բառերով:Երբ տեղեկատվությունը վերաձևակերպվում է սեփական բառապաշարով, ապա ի հայտ է գալիս անձնական իմաստավորումը:
- Տեղի է ունենում սովորողների միջև մտքերի կենդանի փոխանակություն, որը նրանց հնարավորություն է տալիս՝ ընդլանել սեփական արտահայտման բառարանը և ծանոթանալ տարբեր պատկերացումների հետ:

Այսպիսով,խթանում-իմաստի ընկալում-կշռադատում մոդելով կառուցված ուսուցումը դասավանդողին հնարավորություն է տալիս՝

- Ակտիվացնել սովորողների մտածողությունը
- Ընդգծել ուսուցման նպատակները
- Նպաստել գործուն բանավեճին
- Բարձրացնել ուսման շարժառիթները
- Ապահովել ակտիվ ուսումնական գործունեությունն
- Խթանել խորհրդածությունը
- Սովորողներին հնարավորություն տալ լսելու տարբեր կարծիքներ
- Ապահովել տեղեկատվության վերամշակումը սովորողների կողմից
- Նպաստել քննադատական մտածողության զարգացմանը և այլն

Դասավանդողները դառնում են ոչ թե տեղեկատվությունն մեխանիկական հաղորդողներ, այլ՝ ավելի շատ նպաստում են որակական ուսման կայացմանը: Սովորողները կարող են ապագայում այդ գիտելիքները կիրառել պրակտիկայում:Դասավանդողը դառնում է գործընկեր, ուսման մասնակից, իսկ սովորողները՝գործուն յուրացնողները:Այս ամենը վերածվում է հաստատուն գիտելիքների ձեռք բերելու միջոցների: Սովորողները որոշ չափով դառնում են սովորեցնող, իսկ դասարանը վեր է ածվում միության:Դա նպաստում է նոր և հին գիտելիքներին ինտեգրելու կարողության ձևավորմանը:Դասավանդումը լավագույնն է այն ժամանակ, երբ սովորողները տեսնում են, թե ինչպես է իրականացվում ուսուցման գործընթացը: Այդ ձևով նրանք կարողանում են աստիճանաբար սովորել օգտագործել ստացված փորձը:

Այսպիսով,ԽԻԿ համակարգը մասնակիցներին տալիս է հիմք, որի շրջանակներում ներկայացվում են ուսումնական տարբեր գործողություններ:Սրանք էլ իրենց հերթին օգնում են ուսուցչին ուղղորդելու աշակերտի ուսումնական գործընթացը:Այդ համակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս.

Ակտիվացնել աշակերտների մտածողությունը

Հետաքրքիր քննարկումներ ծավալել

Աշակերտներին շահագրգռել սովորել

Աշակերտներին ակտիվորեն ներգրավել ուսումնական գործընթացի մեջ.

Նպաստել դրական փոփոխությունների ձևավորմանը

Խթանել կշռադատված մտածողությունը

Աշակերտներին տրամադրել տարբեր կարծիքների հետ ծանոթանալու պայմաններին:

ԽԻԿ համակարգը գերազանց միջոց է նկարագրական և պատմողական ուսումնական նյութեր անցնելիս աշակերտներին ուղղորդելու համար:Այն կարող է կիրառվել ուսուցման բոլոր աստիճաններում,բոլոր դասարաններում և բոլոր առարկաների դասավանդման ժամանակ:Միակ ճիշտ պատասխան ենթադրող,սակայն աշակերտին կողմնորոշող հարցերը կարող են օգնել բարդ նյութն ընկալել ավելի համակարգված ձևով:Առաջարկվող հարցերը « բաց» են, իսկ կառուցվածքը քաջալերում է կանխատեսել և խորհել: Հետևեբար դրանք ոչ մի կերպ չեն խոչընդոտում քննադատական վերլուծության ընթացքին: ԽԻԿ համակարգի միջոցով սովորելու ընթացքի ուղղորդումն օգնում է իրականացնել մի քանի ուսումնական խնդիրներ.

- Ապահովում է սովորողների գործուն մասնակցությունը
- Ստեղծում է հետաքրքիր քննարկումներ ծավալելու հնարավորություն
- Խրախուսում է աշակերտների ստեղծագործական կարողությունները
- Օգնում է ձևավորել և քննարկման ներկայացնել սեփական հարցերը
- Պահպանում է աշակերտների կայուն հետաքրքրությունը ուսումնասիրվող նյութի նկատմամբ
- Ստեղծում է միջավայր, որը թույլ է տալիս կշռադատել այն, ինչն աշակերտներին արժևորում են
- Նպաստում է քննադատական բարդ մտածողության ձևավորմանը:

Այս մոտեցումների խմբավորմամբ ուսուցիչները կարող են պլանավորել դասերը՝ հաշվի առնելով իրենց աշակերտների զարգացման մակարդակը և յուրացման համար նախատեսված կոնկրետ նյութի ծավալը:Դա իրականացվում է արդեն

հայտնի մոդելի ներսում, որը սովորողների համար ևս աստիճանաբար դառնում է ծանոթ ու սիրելի:Այս մոդելով աշխատելու ընթացքում սովորողները ավելի վստահ են լինելու իրենց դասի ժամանակ և ավելի նպատակաուղղված են կարգավորելու իրենց ճանանչողությունը:

Մեր վերջնական խնդիրն է երեխային սովորեցնել այդ մոդելն ինքնուրույն կիրառել,որպեսզի կարողանան դառնալ հասարակության փնտրված անդամներ:

Ավանդական և ինտերակտիվ ուսուցում

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով , որ այսօր տեխնիկայի զարգացման շնորհիվ շատ մեծ է դպրոցականների ինքնուրույնության և ստեղծագործ լինելու սոցիալական պահանջ, ինչպես նաև անհրաժեշտություն՝ օգտվելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների, որոնք կօժանդակեն դպրոցականների ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացմանը և կհարստացնեն դպրոցում ինքնուրույն գործունեության փորձը : Ժամանակակից կրթության նպատակները փոքր-ինչ փոփոխվել են , փոխվել է բարոյական դաստիարակության բնույթը, սակայն մի շարք ուսումնական չափանիշներ մնացել են նույնը :Սա նշանակում է, որ ավանդական ուսուցման տեխնոլոգիան շարունակվում է կիրառվել կրթական համակարգում և պահպանում էիր գերակայությունը գիտելիքի հաղորդման պարագայում:

Այսօր կիրառելի են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ՝ ավանդական և նորարական: Մենք չենք կարող հստակ ասել, որ պետք է հրաժարվել ավանդական տեխնոլոգիայից և օգտագործել միայն ժամանակակից մեթոդներ, քանի որ դասավանդման լիարժեք դեղատոմս գոյություն չունի, և որի դեպքում լիարժեք և դրական արդյունք կունենա ոչ ոք չգիտի: Ավանդական ուսուցման տեխնոլոգիան դաս-դասարանային համակարգի հիմքն է:Ավանդական ուսուցում տերմինը նշանակում է ուսուցման կազմակերպում, որը 17-րդ դարի սկզբներին ձևակերպել է Յ.Ա. Կոմենսկին իր <<Մեծ դիդակտիկա>> գրքում: Ավանդական ոսուցման բովանդակությունը մեր երկրում զարգացել է հիմնականում խորհրդային ժամանակաշրջանի հանրակրթական դպրոցներում:

Նախ ներկայացնենք, թե ինչ է իրենից ներկայացնում ավանդական ուսուցումը: Ավանդական ուսուցման տեխնոլոգիան հիմնված է բացատրական և ցուցադրական մեթոդի վրա:
Ավանդական ուսուցման ժամանակ դասը բաժանվում է երկու հատվածի՝ հին նյութի հարցում և նոր նյութի հաղորդում: Այս գործընթացը կրկնվում է ամեն օր և սովորողը մի դասին հասցնում է առնվազն 2 անգամ լսել միևնույն նյութը, չհաշված, որ ինքն ա յդ նյութը լսել է նաև նախորդ դասին, երբ դասավանդողը հաղորդում էր նոր նյութը:

Հենց այս ամենն էլ ձանձրույթ է պատճառում ժամանակակից սովորողին, որը ակտի վություն է ուզում: Այս պարագայում անտեսվում են սովորողի մի շարք որակական հ ատկանիշներ, որոնք նրան կարող են մղել ինքնազարգացման: Մենք առաջարկում են ք ավանդական ուսուցման ժամանակ կիրառել տարբեր նորարական տեխնոլոգիանե ր՝ կրթական բարձր մակարդակ ապահովելու և ժամանակակից պահանջները կատա ռելու նպատակով: Օրնակ՝ Մայրենիի
դասին կարելի է ավանդական ուսուցման տեխնոլոգիայի հետ համատեղ կիրառել ն աև տեղեկատվական ուսուցման տեխնոլոգիան: Դրա համար անհրաժեշտ է պատկեր ացում ունենալ բոլոր տեխնոլոգիաների մասին և կատարել ճիշտ ընտրություն, որը կ ախված է բազմաթիվ գործոններից՝

- սովորողների տարիք
- թեմայի արդիականություն և հրատապություն
- սովորողների ընդգրկվածություն
- սովորողների ինտելեկտուալ մակարդակ և այլն:

Ավանդական ուսուցման դեպքում.

- խմբում հավաքվում են միևնույն տարիքի երեխաներ, որոնք ունեն տարբեր ինտելեկտուալ մակարդակ
- խումբն աշխատում է ըստ ժամանակացույցի՝ մեկ տարեկան պլանի և ծրագրի համաձայն
- դասաժամը տրվում է մեկ ուսումնական առարկայի և բոլոր սովորողները սերտում են միևնույն նյութը
- դասարանում սովորողների աշխատանքը գլխավորում է ուսուցիչը:

Ուսուցման մեթոդներ և հնարներ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցմանավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրում կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են,իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ_որ իրավիճակում կարող են օգտակար լինել:Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում

են որպես դեղատոմս։Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։ Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան։Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է։ Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել։ Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը։

Ուսումնական գործընթացում դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝
1. դասի սկիզբ
2. նոր նյութի բացատրություն
3. սովորածը պարզելու հնարներ

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը։Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները։Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ։ Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևորէ։ Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին։Ներկայացնեմ դասը սկսելու մի քանի հնարներ։

Նոր նյութի բացատրություն

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել։ Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը։ Ծավալը գերազանցել ուդեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը։Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը։ 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը։ Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա։ Օրինակ՝ լավ կլինի երկար նախադասությունից հետո օգտագործել կարճ նախադասություն։ Հետո միջին չափի նախադասություն։Մի քանի երկար նախադասությունների հաջորդումը կարող է դժվարացնել աշակերտների ուշադրության կենտրոնացման գործընթացը։Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ։Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով։ Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են։

Խորհրդավորություն
Երեխաները սիրում են գաղտնիքներ։ Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց։ Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը։ Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ՝

- << Ես մտքիս մեջ մի բան եմ պահել: Այն վերաբերում է մեր անցած թեմաներից մեկին:Դուք պետք է ինձ հարցեր տաք:Ես հարցերին կարող եմ պատասխանել միայն <<այո>> կամ <<ոչ>> տարբերակով: Դուք պետք է հարցերն այնպես ձևակերպեք, որ <<այո>> կամ <<ոչ>> պատասխանը ձեզ օգնի հասկանալ, թե մտքիս մեջ ինչ եմ պահել.
- **Գուշակություն**Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է «սատանայի վկա» հնարի հաճախակի կիրառումը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում:
Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում:
Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է: «Սատանայի վկա»հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու համար:

Ուղղորդված ընթերցանություն

Ուղղորդված ընթերցանության մեջ կան երեք հիմնական տարրեր, նախքան ընթերցանությունը, ընթերցանության ժամանակ, կարդալուց հետո: Այստեղ մենք յուրաքանչյուր նմուշի ընթացքում տեսնում ենք ուսուցիչների և աշակերտի դերը:

Նախքան ընթերցումը

Սա, երբ ուսուցիչը ներկայացնում է տեքստը և հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորեցնել ընթերցանությունը սկսելուց առաջ:

Ուսուցչի դերը

- Խմբի համար համապատասխան տեքստ ընտրելու համար:
- Պատրաստեք պատմություն պատմությունը, որը պատրաստվում է կարդալ:
- Աշակերտներին պատմեք պատմությունը:
- Թողնել մի քանի հարցեր, որոնք կարող են պատասխանել ողջ պատմության ընթացքում:
    - Ընթերցանության ընթացքում

Այս ընթացքում, երբ աշակերտները կարդում են, ուսուցիչը տրամադրում է ցանկացած օգնություն, որը անհրաժեշտ է, ինչպես նաև արձանագրում է ցանկացած դիտարկում :

Ուսուցչի դերը

- Լսեք աշակերտներին ընթերցելիս:
- Դիտեք յուրաքանչյուր ընթերցողի վարքագիծ ռազմավարության օգտագործման համար:

Ընթերցելուց հետո

Ուսուցչի հետ ընթերցելուց հետո աշակերտներին ընթերցելուց հետո այն, ինչ նրանք պարզապես կարդացել են և այն ռազմավարությունը, որոնք նրանք օգտագործում են

Ուսուցչի դերը

- Խոսեք եւ քննարկեք այն, ինչը պարզապես կարդացվել է:
- Հրավիրեք աշակերտներին արձագանքելու կամ մանրամասներ ավելացնելու համար:
- Վերադարձեք տեքստի ուսուցման հնարավորություններին, ինչպիսիք են `հարցերի պատասխանները գտնելը:
- Գնահատեք աշակերտի ընկալումը:
- Ընդլայնել տեքստը `տրամադրելով այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գրելը կամ նկարելը:

Սովորածը պարզելու հնարներ

- **Վարդ, փուշ, բողբոջ**

Վարդ- նշեք մի բան, որ լավ հասկացաք

փուշ-նշեք մեկ բան, որը սովորելիս դժվարության բախվեցիք

բողբոջ_ նշեք մեկ բան, որը սովորելուց հետո ձեր մտքում նոր միտք ծագեց

- **Ֆրայերի մոդելը**

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Ավանդական և ժամանակակից մեթոդներով դասի համեմատություն

Ավանդական դաս	**Ժամանակակից մեթոդներով դաս**
Ուսումնական նյութը ծավալուն է, հաճախ կարևորն ու անկարևորը տարբերակված չեն	Ուսումնական նյութը կառուցված է առանցքային կոմպետենցիաների և գաղափարների շուրջ
Ուսումնառության նպատակները ոչ միշտ են չափելի և թափանցիկ	Ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ սովորողների համար
Շեշտը դրվում է գիտելիքների, հմտությունների ուսուցման վրա	Գիտելիքներից և հմտություններից զատ՝ կարևորվում է արժեքներն ու վերաբերմունքը
Կարևորվում է ուսումնական առարկաների անջատ ուսուցում	Առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են նաև վերառարկայական հմտությունները
Առավել կարևորվում է ուսումնական նյութի վերարտադրությունը՝ առանց մտածողության և գործնական հմտությունների հետ կապակցելու	Կարևորվում է բովանդակության խորը ըմբռնումը և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ
Հիմնականում օգտագործվում է միավորային գնահատումը:Այն օգտագործվում է սովորողներին դասդասելու համար	Շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա:Գնահատականը օգտագործվում է սովորողների առաջադիմությունը չափելու համար

Հետազոտական աշխատանք

Հրանտ Մաթևոսյանի <<Հացը>> պատմվածքի 3 –րդ մասը ուսուցանել եմ եմ ավանդական մեթոդով: Հիմնականում դասապրոցեսը եղել է ուսուցչակենտրոն, իսկ 4-րդ մասի ուսուցման և թեմայի ամփոփման ընթացքում կիրառել եմ նոր մեթոդներ և հնարներ:4-րդ մասի ուսուցման ընթացքում կիրառել եմ գուշակություն և ուղղորդված ընթերցանություն, հայտորոշիչ թեստ մեթոդները:

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով գրել եմ անտառ, ջարդել, ընթրիք, տխուր ու գեղեցիկ, ես արժանի չեմ բառերը, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ գլխավոր միտքը:Այնուհետև կիրառել եմ ուղղորդված ընթերցանություն մեթոդը:Ընթերցանությունից հետո աշակերտներին բաժանել եմ անհատական թերթիկներ և հանձնարարել եմ լրացնել:/Հավելված 1, 2/

Թեմայի ամփոփման ընթացքում կիրառել եմ բեմականացում, մտագրոհ, խմբային աշխատանք , մեթոդները: /Հավելված 3/

Փորձագետի դիտարկումներ

	Հետազոտության I օր Ավանդական դաս	Հետազոտության II օր Ժամանակակից մեթոդներով դաս
Մասնակից	7 աշակերտ	9 աշակերտ
Ուշադիր	5 աշակերտ	6 աշակերտ
Անտարբեր	7 աշակերտ	3 աշակերտ
Ակտիվ	5 աշակերտ	7 աշակերտ
Ոգևորված	4 աշակերտ	5 աշակերտ


ավանդական դաս
Ոգևորված 4
Մասնակից 7
ակտիվ 3
ուշադիր 5
անտարբեր 9


ժամանակակից մեթոդներով դաս
մասնակից
ուշադիր
անտարբեր
ակտիվ
ոգևորված
17%
30%
23%
20%
10%

Եզրակացություն

Ադյունավետ ուսուցման պահանջներ բոլորս պետք է ունենանք: Դասավանդման մեջ բազմազանություն մտցնելով, դասը իրականության հետ կապելով, տարբեր գործողություններ մշակելով, խրախուսելով, հնարներ կիրառելով՝ մոտ կկանգնենք որակյալ և արդյունավետ ուսուցմանը:

Հետազոտության ընթացքում ես եկա այն եզրահանգմանը, որ ժամանկակից և կարողունակությունների զարգացմանն ուղղված դասի ընթացքում աշակետների մասնակցության և ակտիվության ցուցանիշը ավելի բարձր է, քան ավանդական դասի ընթացքում: Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառման արդյունքում բարձրացավ սովորողների իմացական գոծունեությունը, ինքնուրույն սովորելու կարողությունը, ինքնագնահատման և հաղորդակցման հմտությունները : Ժամանակակից մեթոդների կիրառման ընթացում կարողացա զարգացնել.

- Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Մշակութային կարողունակություն

Հավելված 1

Ընթերցանությունից հետո

Հարցաթերթիկ 1

Անուն, ազգանուն_____

Հեքիաթի հեղինակը, վերնագիրը_____

Ինչի՞ մասին է հեքիաթը_____

Հեքիաթի ո՞ր հատվածը քեզ դուր եկավ_____

Դուրս գրի՛ր քեզ դուր եկած նախադասությունը_____

Ո՞ր հերոսն է քեզ սրտամոտ, ինչո՞ւ_____

Գրի՛ր պատմվածքում հանդիպած անծանոթ բառերը և բացատրի՛ր

Հավելված 2

Հարցաթերթիկ 2

Անուն, ազգանուն_____

Մեկ նախադասություն, որը կասի՝ ինչի մասին է հեքիաթը _____

Մեկ արտահայտություն, որը կարևոր է այդ հեքիաթի համար_____

Մեկ բառ, որն արտահայտում է հեքիաթի իմաստը_____

Ուրվանկար կամ խորհրդանիշ_____

Ի՞նչ գույն ունի հեքիաթը_____

Ավարտի՛ր միտքը_____

Համեմատիր երկու եղբայրներին

Ավագ եղբայր	Կրտսեր եղբայր

Գրավոր աշխատանքի ինքնաստուգում

Աշակերտի հարցաթերթիկ

		Այո	Ոչ այդքան	Բավարար չափով
1.	Գրավոր աշխատանքիս թերթիկի վրա գրել եմ ամսաթիվը և իմ անունը	28 աշակերտ		
2.	Հեղինակի անունը գրել եմ ճիշտ, ստեղծագործությունը՝ չակերտների մեջ	20 աշակերտ	3 աշակերտ	5աշակերտ
3.	Բոլոր նախադասություններն սկսել եմ մեծատառով	25 աշակերտ	1աշակերտ	2 աշակերտ
4.	Ամեն մի նախադասության վերջում դրել եմ վերջակետ	26 աշակերտ	2 աշակերտ	
5.	Հարկ եղած դեպքում դրել եմ բացականչական և հարցական նշաններ	18 աշակերտ	6 աշակերտ	4 աշակերտ
6.	Իմ բոլոր նախադասություններն իմաստ են արտահայտում	15 աշակերտ	3 աշակերտ	10 աշակերտ
7.	Ես նյութից չեմ շեղվել	12 աշակերտ	9 աշակերտ	7 աշակերտ
8.	Բառերը գրել եմ ճիշտ և անսխալ	15 աշակերտ	8 աշակերտ	5 աշակերտ
9.	Գրել եմ բնագրային բառեր	21 աշակերտ	5 աշակերտ	2 աշակերտ

Հավելված 3

VI դաս. Մայրենի

Ուսուցիչ- Ս. Ղազարյան

Դասի թեման - Հ.Մաթևոսյանի <<Հացը>> պատմվածքի ամփոփում

Հականիշներ

Դասի տիպը- համակցված

Դասի նպատակները.

ա/ակադեմիական- 1/ Տեքստը վերապատմելու կարողության ամրապնդում: Ընթերցման շնորհիվ յուրացրած բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողության զարգացում

2/ Հերոսների արարքների գնահատում և սեփական կարծիքի ձևակերպում

3. Բառապաշարի հարստացում: Հականիշների ոճական արժեքի ընկալում

բ/ սոցիալական- խմբային և անհատական աշխատանքների միջոցով դաստիարակել միասնականությամբ և հանդուրժողականությամբ.

Անհրաժեշտ պարագաներ- դասագիրք, պաստառ, ասույթներ լավաշի մասին, լավաշ,լավաշի պատրաստման պարագաներ, համակարգիչ

Մեթոդներ – բեմականացում, մտագրոհ, խմբային աշխատանք ,սահիկի դիտում

Դասի ընթացքը

Խթանման փուլ-Դասը սկսվեց Հ. Մաթևոսյանի << Հացը>> պապմվածքից հատվածի բեմականացմամբ:

Հարցերի միջոցով ամրապնդել պատմվածքի մասին ունեցած գիտելիքները:

1.Ո՞վ է սեղծագործության հեղինակը:

2.Ի՞նչ գիտեք հեղինակի մասին:

Սահիկաշարի միջոցով ցույց տալ նկարներ հեղինակի ծննդավայրից:

Կարևորել լավաշի արժեքը հայ ժողովրդի կյանքում:Բերել հետաքրքիր փաստեր, պատմել ավանդազրույցներ ու ավանդավեպեր:

Մտագրոհի միջոցով գրել հաց բառի հոմանիշները:

Արտահայտել բառի իմաստը՝ բերելով օրինակներ և գործածել նախադասություններում:

Սահիկաշարի միջոցով ամբողջացնել աշակերտների արտահայտած հոմանիշները:

Ասույթներ, դարձվածքներ ասել հացի մասին:

Իմաստի ընկալման փուլ- Բնութագրել պատմվածքի հերոսին՝ արտահայտելով կարծիք :

Գտնել հերոսի զղջումն արտահայտող տողերը:

Աշխատանք զույգերով -1-ին շարքի զույգերը վերնագրում են 1-ին և 2-րդ հատվածները, 2-րդ շարքի զույգերը՝ 3-րդ հատվածը, իսկ 3-րդ շարքի զույգերը՝ 4-դ հատվածը:

Տեքստից դուրս գրել աշխատանքային գործիքներ նշանակող բառերը, պաստառի միջոցով գրել նկար-գործիքների անվանումները:

Անվանել կենդանիների և թռչունների խմբերը:

Կշռադատման փուլ-Աշակերտներին հանձնարարել գոհ, արժանի և կուշտ բառերին ժխտական մասնիկներ ավելացնել և բացատրել բառերի տարբերությունը:Բացատրել <<Հականիշներ>> թեման, ամրապնդել վարժություններով/ կատարել վարժություն 1:

Գնահատում

Տնային հանձնարարություն- Տնային աշխատանք հանձնարարել վարժ 2, 3 էջ 65

Հավելված 4
V դաս. Մայրենի

Ուսուցիչ- Ս. Ղազարյան

Դասի թեման - Գեղամ Սարյան <<Կարոտ>>
Դասի նպատակը.
Իմանալ բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարն ու թեման
Կարողանալ ընկալել հայրենիքից հեռու գտնվող պանդուխտի մայրական սիրո և կարոտի արտահայտությունը
Կահավորում - թեմային համապատասխան նկարներ, պաստառներ և այլ նյութեր:
Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ՝ Վենի դիագրամ, մտագրոհ, խմբային աշխատանք
Միջառարկայական կապ-Աշխարհագրություն, Պատմություն, Երաժշտություն
Դասի ընթացքը
Դասարանը նախապես բաժանվեց չորս խմբի:
Խթանման փուլում աշակերտները նշեցին, թե ինչ են հասկանում կարոտ ասելով:



Անդրադարձ կատարվեց <<Երազ>> (Ս. Շահազիզ) բանստեղծությանը, որտեղ նույնպես խոսվում է հայրենիքից հեռու գտնվող պանդուխտի մայրական սիրո և կարոտի մասին:
Աշակերտները Գեղամ Սարյանի կյանքը ներկայացնելուց հետո պատմեցին Հայրենական Մեծ պատերազմի մասին:Այնուհետև բանաստեղծությունը արտասանելուց հետո երգեցին այն:
Իմաստավորման փուլում հաղորդվեց նոր նյութը՝ Համո Սահյան <<Արագիլները>> բանաստեղծությունը, տրվեց նոր և անծանոթ բառերի բացատրություն:
Կատարվեց խմբային աշխատանք: Յուրաքանչյուր խմբին հանձնարարվեց առաջադրանք, ըստ որի աշակերտները գնահատվեցին վերջում:
Տնային աշխատանք հանձնարարվեց բառային աշխատանք 1, 2 :

Խումբ - I

1. *<<Կարոտ>> բանաստեղծությունից դուրս գրել գյուղի պատկերները.*

2. *Հետևյալ ածանցներով կազմել երկուական բառ.*

ային _ _____
որեն - _____
ապ - _____
ան - _____
ություն - _____

Խումբ I I

1. *<<Արագիլները>> բանաստեղծությունից դուրս գրել մակդիրները.*

2. *<<Կարոտ>> բանաստեղծությունից դուրս գրել 5 գոյական և դարձնել ածական: Նշել հնչյունական ինչ փոփոխություններ են տեղի ունեցել.*

Խումբ I I I

3. *Համեմատել <<Երազ>> և <<Կարոտ>> բանաստեղծությունները.*



Գրականություն

1.Սերոբ Խաչատրյան << Ուսուցման արդյունավետ հնարներ>> 2020

2. Նախաշավիղ 2014.3

3.Հայոց լեզու և գրականություն 2008.5-6

4. Մանկավարժական միտք 2014 3–4

5. <<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ վերապատրաստող կազմակերպության տրամադրած ուղեցույց